Վահան Թոթովենց

Աղոթքին ձևը

Գիշեր է:

Կուլա կույսը, կուլան անոնք, որ մինակ են, միսմինակ… Երկու ձեռքերու մեջ սեղմած իր գլուխը, աչքերը գոց, կը վազե ան հողմի մը պես դեպի երազներու քառսը:

Մերկ է ան, ինչպես բոլոր գեղեցկությունները, և իր ցրքուն մազերուն տակեն կ՝երևին իր չքնաղ ուսերը, ինչպես լուսինկան՝ սաղարթներու բացատներեն, կամ ինչպես աղավնյակ մը՝ ցանցին մեջ:

Չխոսիր, լուռ է շուշանը, որ կաճի, լուռ է հույսը, որ կը մարի:

Մի՛ լար, ո՞վ կույս, վե՞ր առ գլուխդ և մեկդի նետե՛ ճակատիդ մեռելաբույր և դամբանական ստվերները, ոսկեզօծե զայն աստղերու խորհուրդով, վասնզի դուն իբրև ճառագայթ մը պիտի խառնվիս Արշալույսի հսկայական թափորին:

Ճշմարիտ ճառագայթ մը ըլլալ՝ երկու գիշերներու մեջ սավառնող աստվածություն մը կը նշանակե:

Չշարժիր ան, կ՝սպասե, որ Արշալույսը իր թևերուն վրա առնե և փայփայե իր տրտմությունը, որ երկինք մըն է:

Ծունկի եկած է, գլուխը սեղմած երկու ձեռքերուն մեջ, քիչ մը կորացած՝ լուռ կը հեծկլտա հեռավոր մշուշին մեջ:

Աղոթքը այս ձևը կառնե խավարին մեջ:

Կո՛ւյսը…